

ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



GANTEGH

SUNDAY BULLETIN OF
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 20 Օգոստոս 2017
Բ ԿԻՐԱԿԻ ԶԿՆԻ ՎԻՐԱՓՈՒՄԱՆ
/ԹԻԻ 20

SUNDAY, August 20, 2017
2nd SUNDAY OF THE FEAST OF
ASSUMPTION – NO/20



TODAY'S BIBLE READINGS

2 Corinthians 1.1-11 | Mark 4.35-41 |

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԵՂԻԱ Ա. ՔՀՆՅ. ՔԵՐՎԱՆՃԵԱՆ

Հոգեւոր Հովիւ

Celebrant:

REV. ARCH. FR. YEGHIA KERVANJYAN

Pastor

**Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan,
Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan**

Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian


Choirmaster: Miss Lori Antounian

Organist: Mr. Karen Manucharyan

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

2 ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՆ 1.1-11

1Պօղոս, Աստուծոյ կամբով Յիսուս Քրիստոսի առաքեալը, ու Տիմոթէոս մեր եղբայրը, Կորնթոսի մէջ եղած Աստուծոյ եկեղեցիին եւ Աքայիայի մէջ եղող բոլոր սուրբերուն. **2** շնորհք ու խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, եւ Տէր Յիսուս Քրիստոսէ: **3**Օրհնեա՛լ ըլլայ Աստուած, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի Հայրը, արգահատանքի Հայրը եւ ամէն մխիթարութեան Աստուածը, **4**որ կը մխիթարէ մեզ մեր ամբողջ տառապանքին մէջ, որպէսզի մենք կարենանք մխիթարել անոնք՝ որ որեւէ տառապանքի մէջ են, այն մխիթարութեամբ՝ որով մենք կը մխիթարուինք Աստուծմէ. **5**որովհետեւ ինչպէս Քրիստոսի չարչարանքները կ'առատանան մեր մէջ, նմանապէս մեր մխիթարութիւնն ալ կ'առատանայ Քրիստոսի միջոցով: **6**Եթէ տառապիւնք՝ ձեր մխիթարութեան եւ փրկութեան համար է, որ արդիւնաւոր կ'ըլլայ՝ համբերելով այն նոյն չարչարանքներուն, որոնցմով մենք ալ կը չարչարուինք. ու եթէ մխիթարուինք՝ ձեր մխիթարութեան եւ փրկութեան համար է: **7**Մեր յոյսը հաստատուն է ձեր վրայ, որովհետեւ գիտենք թէ ինչպէս հաղորդակից էք մեր չարչարանքներուն, նոյնպէս ալ մխիթարութեան պիտի ըլլաք: **8**Որովհետեւ չենք ուզեր, եղբայրներ, որ անգիտանաք Ասիայի մէջ մեզի պատահած տառապանքը. չափէն աւելի ծանրաբեռնուեցանք, մեր կարողութենէն աւելի, ա՛յնքան՝ որ նոյնիսկ յուսահատեցանք կեանքէն: **9**Բայց մահուան վճիռը ունէինք մեր վրայ, որպէսզի վստահինք ո՛չ թէ մենք մեզի, հապա Աստուծոյ՝ որ մեռելները կը յարուցանէ: **10**Ան այդպիսի մեծ մահէ մը ազատեց մեզ, ու կ'ազատէ. **11**եւ կը յուսանք թէ ան տակաւին պիտի ազատէ: Դուք ալ կը գործակցիք՝ մեզի համար աղերսելով, որպէսզի շատեր շնորհակալ ըլլան մեր պատճառով՝ շատ անձերու աղօթքին միջոցով մեզի եղած շնորհին համար:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 4.35-41

35Նոյն օրը՝ երբ իրիկուն կ'ըլլար, ըսաւ անոնց. «Եկէ՛ք ծովուն միւս եզերքը անցնիք»։ 36Անոնք ալ բազմութիւնը արձակելով՝ առին զինք, քանի նաւուն մէջ էր. ուրիշ նաւակներ ալ կային անոր հետ։ 37Ու հզօր փոթորիկ մը եղաւ եւ ալիքները նաւուն վրայ կը խուժէին, այնպէս որ արդէն կը լեցուէր. 38Իսկ ինք՝ նաւուն ետեւի կողմը՝ բարձի վրայ կը քնանար։ Արթնցուցին զինք եւ ըսին իրեն. «Վարդապէ՛տ, հոգ չե՛ս ըներ՝ որ կը կորսուիք»։ 39Ուստի ելլելով՝ սաստեց հովը եւ ըսաւ ծովուն. «Դադրէ՛, լո՛ւռ կեցիր»։ Հովը դադրեցաւ, ու մեծ խաղաղութիւն եղաւ։ 40Ըսաւ անոնց. «Ինչո՞ւ այդպէս երկչոտ էք. ի՞նչպէս կ'ըլլայ՝ որ հաւատք չունիք»։ 41Անոնք չափազանց վախցան, եւ կ'ըսէին իրարու. «Արդեօք ո՞վ է ասիկա, որ նոյնիսկ հովն ու ծովը կը հնազանդին իրեն»։


2 Corinthians 1.1-11

1 Paul, an apostle of Jesus Christ by the will of God, and Timothy our brother, unto the church of God which is at Corinth, with all the saints which are in all Achaia:² Grace be to you and peace from God our Father, and from the Lord Jesus Christ.³ Blessed be God, even the Father of our Lord Jesus Christ, the Father of mercies, and the God of all comfort;⁴ Who comforteth us in all our tribulation, that we may be able to comfort them which are in any trouble, by the comfort wherewith we ourselves are comforted of God.⁵ For as the sufferings of Christ abound in us, so our consolation also aboundeth by Christ. ⁶ And whether we be afflicted, it is for your consolation and salvation, which is effectual in the enduring of the same sufferings which we also suffer: or whether we be comforted, it is for your consolation and salvation. ⁷ And our hope of you is stedfast, knowing, that as ye are partakers of the sufferings, so shall ye be also of the consolation. ⁸ For we would not, brethren, have you ignorant of our trouble which came to us in Asia, that we were pressed out of measure, above strength, insomuch that we despaired even of life: ⁹ But we had the sentence of death in ourselves, that we should not trust in ourselves, but in God which raiseth the dead: ¹⁰ Who delivered us from so great a death, and doth deliver: in whom we trust that he will yet deliver us; ¹¹ Ye also helping together by prayer

for us, that for the gift bestowed upon us by the means of many persons thanks may be given by many on our behalf.

Mark 4. 35-41

³⁵ And the same day, when the even was come, he saith unto them, Let us pass over unto the other side. ³⁶ And when they had sent away the multitude, they took him even as he was in the ship. And there were also with him other little ships. ³⁷ And there arose a great storm of wind, and the waves beat into the ship, so that it was now full. ³⁸ And he was in the hinder part of the ship, asleep on a pillow: and they awake him, and say unto him, Master, carest thou not that we perish? ³⁹ And he arose, and rebuked the wind, and said unto the sea, Peace, be still. And the wind ceased, and there was a great calm. ⁴⁰ And he said unto them, Why are ye so fearful? how is it that ye have no faith? ⁴¹ And they feared exceedingly, and said one to another, What manner of man is this, that even the wind and the sea obey him?



ԱՆՏԱՐԱԿՈՅՍ ՀԱԻԱՏՔ

<<Ո՞ր եմ հաւատք ձեր.>>


(ՄԱՐԿ. Դ.35-41)

Քրիստոսի յանդիմանական խօսքերէն մէկն է սոյն հարցումը: Յանդիմանական հարցում մը՝ ուղղուած տասներկու առաքեալներուն, զոր Մարկոս կարեւորութեամբ յիշատակած է իր Աւետարանին մէջ: Հարցում մը՝ որ տակաւին պահած է իր այժմեականութիւնը եւ այդ իսկ պատճառաւ զայն բնականաբար նիւթ կը դառնայ Կիրակի օրուայ խորհրդածութեան:



Դեպքը պատահած էր Գալիլիոյ ծովակին վրայ: Առաքեալները երբ ծովակին մէկ ափէն միւսը կը նաւարկէին, յանկարծ փոթորիկ մը կը պայթի եւ կը վտանգուին նաւակին գոյութիւնը եւ իրենց կեանքը:

Վախը կը պատէ առաքեալներուն սիրտը: Տիրող կացութենէն յուսահատ, անոնք կը ստիպուին իրենց Վարդապետը արթնցնել, որ օրուան քարոզութենէն յոգնած, հանգիստ կը քնանար: Քրիստոս քունէն արթննալով, կը սաստէ երկրային տարերքը եւ ծովը կը գտնէ իր նախկին անդորրութիւնը: Ապա Քրիստոս, իր նայուածքը առաքեալներուն սեւեռելով, հարց կու տայ անոնց. <<Ո՞ր եւ ձեր հաւատքը>>:



Առաքելները, ականատես ըլլալով գերբնական պատահարի մը, անակնկալի եկած էին եւ մատնուած շփոթալի վիճակի մը: Անոնք չանդրադարձան Քրիստոսի հարցումին տարողութեան, այլ բաւականացան իրարու ըսելով. <<Արդեօք ո՞վ է ասիկա, որ հովերուն ու ջուրերուն հրաման կու տայ եւ կը հնազանդին իրեն>>:



Տասներկուքին կը պակսէր պէտք եղած իմացականութիւնը, թափանցելու Վարդապետին յանդիմանական հարցումին եութեան եւ հասկնալու անոր խոր իմաստը: Այդ ըմբռնումը ունեցաւ հեթանոսաց բանիմաց քարոզիչը՝ Պօղոս:

Պօղոս Առաքելի խորաթափանց միտքը ըմբռնեց հաւատքի կատարելիք դերը մարդկային կեանքի մէջ: Ան իր քարոզչութեանց ընթացքին եւ թուղթերուն մէջ յաճախ ծանրացաւ հաւատքի զօրութեան վրայ, քանի որ Պօղոս անհատական փորձառութիւնը ունեցած էր հաւատքի ներզօր ուժին:

Կրօնքի հինադիրներ մարդկային կեանքին մէջ հաւատքի յայտնաբերած ուժականութիւնը նկատելով, զայն իրենց կրօնի հիմը դարձուցած են: Քրիստոնէական կրօնքը, իր աստուածային ծագումով եւ Պօղոսի ջանքերուն շնորհիւ, դարձաւ հաւատքի կրօն:

Առանց հաւատքի՝ կարելի չէ բացատրել մարդու ոգեղինութիւնը, հոգեկան զգացումները, բարոյական գործերը, միստիկ ապրումները եւ կատարած գիւտերը: Հաւատքը բանաւոր էակը վերածած է ստեղծագործ արարածի մը:

Քրիստոնէութեան շնորհիւ կազմուեցաւ հաւատացեալներու նոր դասակարգ մը, որուն ունեցած հաւատքը եւ իտեալը զարկ տուաւ քաղաքակրթութեան զարգացման եւ մշակոյթի բարգաւաճման:

Հաւատքը, Պօղոսի սահմանումով, յուսացուած բաներուն հաստատութիւնը եւ աներեւոյթ բաներուն ապացոյցն է (Եբր.ԺԱ. 1):
Հաւատքը անծի մը վարդապետութեան ըմբռնումն է:
Քրիստոնէութիւնը հաւատքն է Աստուծոյ գոյութեան, Քրիստոսի յարութեան, հոգիի անմահութեան, ճշմարտութեան եւ արդարութեան վերրջնական յաղթանակին:

Հաւատքի վերաբերեալ ճշմարտութիւնները կարելի չէ զգայարանքներու փաստարկութեան ենթարկել: Հաւատքի տարրեր վեր կը մնան մարդկային մտածողութեան շրջագիծէն:

Աննախապաշարեալ հաւատքի շնորհիւ է, որ մենք աստուածայինն արարաչագործութեանց ընդմէջէն զԱստուած կը ճանչնանք:

<<Ո՛ր է ձեր հաւատքը>>:

Աստուածորդւոյն յանդիմանական հարցումը ուղղուած է նաեւ մեզմէ անոնց, որոնք իրենց վստահութիւնը կորսնցուցած են առ Աստուած:

Կեանքը պայքար մը եղած է բոլոր ժամանակներու մէջ: Կեանքի պայքարէն յաղթական դուրս եկած են անոնք, որոնք ճշմարիտ եւ գիտակից հաւատք ունեցած են: <<Այն ամէնը, որ Աստուծմէ ծնած է>>, կ'ըսէ Յովհաննէս Առաքեալ, աշխարհի կը յաղթէ: Ո՛վ է որ աշխարհին կը յաղթէ, եթէ ոչ անիկա որ կը հաւատայ թէ Յիսուս Որդի Աստուծոյ է>> (Ա. Յովհ. Ե.4-5):

Սիրելի հաւատացեալներ՝

Հաւատքը իմաստուն անձերուն փնտռած հազուագիւտ, թանկագին քարն է: Կէօթէ ըսած է. <<Եթէ հաւատք ունիս, ի սեր Աստուծոյ, տո՛րկ անկէ ինծի մաս մը, իսկ եթէ տարակոյսներ ունիս՝ քեզի պահէ՛ զանոնք, քանզի անոնցմէ ես շատ ունիմ>>:

Եթէ կ'ուզենք մեր կիրքերուն իշխել եւ կեանքի պայքարէն յաղթական դուրս գալ, հետեւինք առաքեալին քայլերուն եւ <<Յիսուսի նայինք, մեր հաւատքի առաջնորդին եւ կատարողին>> (Եբր. ԺԲ.2):

Տ. Եղիա Ա. Քհնյ. Քերվանճեան

Երեքշաբթի – 22 Օգոստոս 2017

Տօն Ս. Յովակիմ եւ Ս.

Աննա

**Ս. Յովակիմի և Աննայի՝ Ս.
Աստուածածնի ծնողներու եւ
իւղաբեր կանանց
յիշատակութեան օր**



Սուրբ Յովակիմի եւ Աննայի անունները անմիջապէս կը կապուին Յիսուսի հետ՝ ըլլաով Աստուածամօր ծնողները: Ըստ աւանդութեան՝ բարեպաշտ և մեծահարուստ Յովակիմը Դաւիթի ցեղէն էր՝ թագաւորական ընտանիքէ, իսկ Աննան՝ քահանայական ընտանիքէ: Օր մը, տաճարին մէջ ընծայ մատուցելու ընթացքին, քահանան Յովակիմին կը պատուիրէ վերջաւորութեան կանգնիլ, քանի որ ան անզաւակ էր: Ասկէ վշտացած՝ Յովակիմը դուրս կը վազէ եւ անմիջապէս լեռ կը բարձրանայ՝ երդում ընելով չիջնել այնտեղէն մինչեւ Աստուծոյ այցելութիւնը: Անոր օրինակով Աննան ալ տան մէջ կ'աղօթէր եւ ապաշխարութեան կը նուիրուի: Եւ օր մը, երբ Աննան պարտեզին մէջ կը տեսնէ իրենց ձագերուն հետ խաղցող թռչուններուն, կը տխրի եւ կու լայ, քանզի ինքը զրկուած էր մայրանալու շնորհքէն: Այդ պահուն կը յայտնուի Աստուծոյ հրեշտակը եւ կ'աւետէ, որ զաւակ պիտի ունենայ, որուն երանի պիտի տան բոլոր ազգերը: Նոյն տեսիլքը կ'երեւի նաեւ Յովակիմին, ով ուրախութենէն կը սկսի ողորմութիւն բաժնել

աղբատներուն: Աննան կը յղիանայ, եւ ծնուած հրեշտականման մանկան կ'անուանեն Մարիամ, որ կը նշանակէ լուսաւորեալ: Իւղաբեր կանայք Յիսուսի չարչարանքներուն, թաղման եւ խաչելութեան ականատեսներն են: Անոնք Տիրոջ Յարութեան առաջին ակետաբերներն են:

Իւղաբեր կանայք Քրիստոսին հետեւեցան իր ողջ երկրային առաքելութեան իրագործման ընթացքին: Եկեղեցւոյ կողմէ անոնք կը կոչուին «Իւղաբեր», որովհետև Միաշաբթի (Կիրակի) առաւօտ գերեզման գացին՝ Յիսուսի մարմինը իրենց պատրաստած անուշահոտ իւղերով օծելու: Իրենց անձնուիրութեան շնորհիւ անոնք առաջինը տեսան Յարուցեալ Փրկիչին եւ այդ մասին յայտնեցին առաքեալներուն: Անոնք նաեւ՝ խմբովին ներկայ էին Վերնատան Զոգեգալուստին եւ առաքեալներուն հետ ստացան Սուրբ Զոգիին շնորհները:

Tuesday - 2017-08-22

Commemoration of Sts. Joachim and Anna, Parents of the Holy Mother of God, and Oil-Bringing Women

The names of St. Joachim (Jehoiakim) and Anna are closely related to Jesus, as they are the parents of the Holy Mother of God.

According to the tradition, wealthy Joachim was a descendant of King David, and Anna was the daughter of a priest. One day, when performing a service in the cathedral, the priest tells Joachim to stand in the end, as he had no son. Becoming upset, Joachim comes out of the Cathedral and immediately climbs up the mountains, vowing not to descend the mountain until the visit of God. Following his example, Anna, staying at home, devotes herself to prayer and repentance. And once, when Anna sees in the garden the birds playing with their nestlings, becomes sad and cries, as she wasn't granted the grace of being a mother. Just at that moment the Angel of God visits Anna, telling her that God will be granting her a son who will be the



mother of the Savior of the world. Joachim also has the same vision and becoming very happy, gives alms to the poor. The parents decide to devote the baby to the Church. The baby is named Mary, which means “Illuminated”. The oil-bringing women are the witnesses of Christ’s torments. They are the first to give the good tidings of the Resurrection of our Lord. The Oil-Bringing women followed Christ during all the time of realizing His earthly mission. The church calls them “Oil-Bringing Women” as on Sunday, in the morning, they hurried to the tomb to anoint the body of Jesus by the aromatic oils prepared by themselves.

Thanks to their devoutness they were first to see the Resurrected God and told about it the Apostles. They were in the upstairs during Pentecost and together with the Apostles received the graces of the Holy Spirit.

The Armenian Apostolic Church commemorates the memory of St. Joachim and Anna together with the oil-Bringing Women.

Երանի՛ Անոնց, որ կը հալածուին արդարութեան համար

Մատթէոս 5: 10

Արդարութիւնը մարդկային կեանքի հիմն է:

Արդարութիւնը նաեւ խաղաղութեան
պատուանդանն է: Առանց արդարութեան
չկայ իրական խաղաղութիւն:

«Արդարութեան պտուղը խաղաղութեամբ
կը սերմանուի անոնց համար, որոնք
խաղաղութիւն կը կնքեն» (Յակոբ Գ- 18),

քանզի Աստուած Ինքն է Գերագոյն Արդարն
ու Արդարութիւնը, եւ առանց աստուածային միջամտութեան դժուար է
պատկերացնել արդարութիւնը: Երանելի են ոչ միայն արդարութեան
քաղցն ու ծարաւը ունեցողները, այլ նաեւ՝ անոնք, որոնք կը հալածուին
արդարութեան համար:



Արդարութիւնը կեանքի այն վիճակն է, երբ մարդ արարածը հաշտ է Աստուծոյ հետ, իր եւ իր նմանին հետ: Աստուած միշտ կը թելադրէ ապրիլ եւ գործել արդարութեամբ: «Դատ դատաստանի ժամանակ անիրաւութիւն մի՛ ըներ, աղքատի հանդէպ աշառութիւն մի՛ ըներ, հարուստին մի՛ շողոքորթէ՛ր: Արդա՛ր դատէ քու ընկերոջդ» (ՂԵԼՄԱԳՈԳ ԺԸ 15): Հին կտակարանի աստուածադիր օրէնքներուն մէջ մեծ տեղ կը գրաւէ արդարութեան պահպանումը: «Արդար դատ կ'ընէք, որպէսզի ապրիք, մտնէք ու ժառանգէք այն երկիրը, որ Տէր Աստուածը կու տայ ձեզի» (Բ Օրէնք ԺԶ 20):

Նոր կտակարանի մէջ բազմաթիւ են արդարութեան եւ արդարութիւն գործողներու մասին օրինակները: Քրիստոսով վերածնուած մարդու կոչումը արդարութեամբ եւ ճշմարտութեան սրբութեամբ իր կեանքը ապրիլն է: Իբրև լոյսի որդիներ՝ Քրիստոսի հետեւորդները պարտաւոր են իրենց գօտեպնդել ճշմարտութեան եւ արդարութեան գրահով, որպէսզի կարողանան չարի մխացող բոլոր նետերը մարել: Քրիստոս Ինքը ենթարկուեցաւ հալածանքներու, նեղութեան եւ, ի վերջոյ, կրեց Իր խաչը: Յիսուսի հետեւորդները դարերով յանձն առին հալածանքն ու տառապանքը՝ յանուն արդարութեան, քանզի վստահ էին, որ արդարութեան համար հալածուողը մնայուն բնակիչն է Երկինքի արքայութեան:

Աւետարանի աշակերտներուն կեանքը յարատել պայքար է՝ արդարութեան իրագործման եւ պաշտպանութեան համար: Հալածանքն ու տառապանքը քուրայ են, որոնց մէջ մենք կը կորսնցնենք եսասիրութիւնը, ազահութիւնը, փառամոլութիւնը: Սուրբ Ներսէս Շնորհալին կը յիշեցէ, որ արդարութեան համար հալածուողները երջանիկ են, որովհետև չարչարակից են Քրիստոսին:

«Երանի անոնց, որոնք կը հալածուին արդարութեան համար, որովհետև անոնց է Երկինքի Արքայութիւնը». այս մարտահրաւէր է իւրաքանչիւր հաւատաւոր քրիստոնէայի: Երանի անոր, ով պատրաստ է ընդառաջելու այս մարտահրաւէրին:





**Միրելի հաւատացեալներ,
Անոնք որոնք կը փափաքին, որ
Հոգեւոր հովիւը այցելութիւն
կատարէ իրենց հիւանդ ընտանեկան
պարագաներուն կամ
հարագատներուն, Եկեղեցւոյ Հովիւր՝
Արժ. Տ. Եղիա Ա. Քինյ. Քերվանճեան պատրաստէ
անմիջականօրէն իր այցելութեամբ ընդառաջելու
ձեր փափաքին:
Հաճեցէք կապ պահել՝ Տէր Հօր հետ
հեռաձայնելով՝ (514) 241-9347 կամ
Եկեղեցւոյ գրասենեակ (514) 279-3066**



FAMILY PRAYER

*God made us a family
We need one another
We love one another
We forgive one another
We work together
We play together
We worship together
Together we use God's word
Together we grow in Christ
Together we love all men
Together we serve our God
Together we hope for Heaven
These are our hopes and ideals
Help us to attain them,
O God, Through Jesus Christ
our Lord*



Dear
Parishioners,
If you have
family
members or
relatives that



you wish to have spiritual support, our
Pastor Arch. Fr. Yeghia Kervanjan is ready
to fulfill your wish and visit them, when
and where is needed. Please feel free to
contact Der Yeghia directly at (514) 241-
9347
or call the secretariat of the Church at
(514) 279-3066

ՏՆՕՐՅՆԷՔԻ ԱԻԱՆԴՈՅԹՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՅԹԸ

Տնօրհներք փափաքող
հաւատացեալները
կրնան հեռաձայնել **Տ.
Եղիա Ա. Քհնյ.**

Քերվանճեանին`
(514) 241-9347 կամ
Եկեղեցւոյ գրասենեակ`
(514) 279-3066



The Tradition of Home Blessing

The home is blessed for dedication or rededication, a reminder that the home reflects the Kingdom of God. Traditional times of the year for Armenian homes to be blessed are Eastertide (the 50 days following Easter), Christmastide (until February 14, the Feast of the Presentation), and after having moved into a new home.

At a Home Blessing, every member of the family assembles with the priest to sanctify together three life-giving gifts: bread, water, and salt. It is a custom for the priest to bring with him a *nushkhar* as a symbol of the presence of God's blessing.

To request a Home Blessing, please contact with Fr. Yeghia
at (514) 241- 9347 or church office at (514) 279-3066.



Աստուածաշունչի Սերտողութիւն

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ



Եկե՛ք միացեք մեզի ամեն
Չինգաբթի երեկոյեան ժամը
7:00-ին, մասնակից ըլլալու մեր
հետաքրքրական
Աստուածաշունչի նիւթերուն
Եւ ընկերային միջավայրին:

Աստուածաշունչի սերտողութեան
խումբը՝ ընկերային ջերմ
մթնոլորտի մէջ հաճելի ժամանակ
կ'անցնէ, Տ. Եղիա Ա. Ըհնյ.
Զերվանճեանի՝ բժախնդրօրէն
պատրաստած
ստուածաշնչական նիւթերու
հետաքրքրական ճոխ
գիտելիքներով:





ՇՆՈՐՀԱԻՈՐԱՆՔ

Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցույ
Հովիւն ու Ծխական Խորհուրդը

ՄԻԼԱ ԱԼԵՔՍԱՆՏՐԱ ՖԻՔԲԱ

Սկրտութեան օրհնաբեր եւ ուրախ առիթով
իրենց խորին շնորհաւորանքը կը յղեն մկրտեալի ծնողներուն
եւ բոլոր հարազատներուն, աղօթելով առ Աստուած,

որ փոքրիկն **ՄԻԼԱ ԱԼԵՔՍԱՆՏՐԱ**

Ս. Սկրտութեան աւագանէն իր վերստին ծնունդով արժանանայ
Աստուածային Օրհնութեան
իր կեանքի ամբողջ տեւողութեան:



CONGRATUALTIONS ON THE BAPTISMAL CEREMONY

The Pastor & the Parish Council
of St-Gregory the Illuminator Armenian Cathedral

On the Baptismal ceremony
of the child

MILA ALEXANDRA FICCA

Extend their heartfelt congratulations
to the child parents & family.





**Ուշադրութիւն մեր սիրելի հաւատացեալներուն,
Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն,
հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ
քարտուղարութեան (514) 279-3066, մեր
հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար
կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

Հովիւ եւ Ծխական Խորհուրդ



**Attention to our beloved parishioners,
If you have changes in your address, e-mail or phone numbers
please feel free to convey your new data to the Church office at
(514) 279-3066, to maintain our communication in a regular,
continuous, and up-to-date course.
Thank you for your cooperation.**

Pastor and Parish Council



Եկեղեցւոյ Տաղաւար Տօներ եւ Յառաջիկայ Ձեռնարկներ

Ուխտագնացութիւն (Քէյպէք Սիթի) -

St-Anne-De- Beaupre Տաճար – Չորեքշաբթի, 30 Օգոստոս 2017

Խաչվերաց – Կիրակի, 17 Սեպտեմբեր 2017

Տարեկան Պազար – Շաբաթ եւ Կիրակի – Հոկտեմբեր 28 եւ 29, 2017

Սանուկներու Ս. Ծնունդ / CFFA – Կիրակի, 3 Դեկտեմբեր 2017

Եկեղեցւոյ Գնման եւ Օծման 47-րդ Տարեդարձ –

Կիրակի, 10 Դեկտեմբեր 2017

FEAST DAYS AND UPCOMING EVENTS

Pilgrimage (Quebec City) -

St-Anne-de-Beaupre Shrine– Wednesday, August 30, 2017

Feast of the Exaltation of the Holy Cross –

Sunday, Sept. 17th, 2017

Annual Bazaar – Saturday & Sunday-

October 28 & 29, 2017

Children’s Christmas /CFFA –


Sunday, December 3rd, 2017

Church 47th Anniversary –

Sunday, December 10th, 2017

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 20 Օգոստոս 2017

Տիկ. Սոնա Սուվալեանի,
Տ. եւ Տիկ. Չարեհ եւ Մարիա Պոյաճեանի եւ զաւակներուն,
եւ համայն Սուվալեան, Թովմասեան եւ Ճէպէճեան ընտանիքներու,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ զակին, եղբօր, մօրեղբօր եւ հարազատին՝

ՌԱՖՖԻ ՍՈՒՎԱԼԵԱՆԻ

(RAFFI SOUVALIAN)

Մահուան առաջին տարելիցին առիթով

Ինչպէս նաեւ՝

իրենց սիրեցեալ քրոջ եւ հօրաքրոջ՝

ԱՐՄԵՆՈՒՅԻ

ՍՈՒՎԱԼԵԱՆ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

(ARMENOUHI SOUVALIAN NALBANDIAN)

(մահացած Ֆիլատէլֆիա)

Մահուան 40-ին առիթով

ԵՒ

ՍԱՆՈՒԷԼ, ԱԲՐԱՅԱՍ, ՍԱՐԳԻՍ, ԼԵՒՈՆ,

ԺԻՐԱՅՐ ԵՒ ՎԱՐԴԱՆ

ՍՈՒՎԱԼԵԱՆՆԵՐՈՒ

Հոգիներուն ի հանգիստ

(սուրճի սպասարկուրթիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ)



**Տիկ. Մաննիկ Օրթաինճէյեանի եւ զաւկին՝ Վազգէնի,
Տ. եւ Տիկ. Մանուկ եւ Սելլա Օրթաինճէյեանի եւ զաւակներուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝**

ՊԱՐՈՅՐ ՕՐԹԱԻՆՃԵՅԵԱՆԻ

(BARUYR ORTAINCEYAN)

Մահուան 13-րդ տարելիցին առիթով

Ինչպէս նաեւ՝

Իրենց սիրեցեալ հօրեղբօր՝

ԳՐԻԳՈՐ ՕՐԹԱԻՆՃԵՅԵԱՆԻ

(KRIKOR ORTAINCEYAN)

(մահացած Պոլիս)

Մահուան 2-րդ տարելիցին առիթով



**Տօղրամաճեան եւ Մաղաքեան ընտանիքներու,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ մօր եւ մեծ մօր՝**

ՌՕԶԱ ՎԱՐԴՈՒԻՅԻ

ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆԻ

(ROSA VARTOUI DORAMAJIAN)

Մահուան 30- րդ տարելիցին առիթով

Ինչպէս նաեւ՝

Իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր, եղբօր,

հօրեղբօր եւ հարազատին՝

ՆՈՒՊԱՐ ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆԻ

(NOUBAR DORAMAJIAN)

Մահուան 7-րդ տարելիցին առիթով



ՆՈՒԲՐԱՏՈՒՄԻԹԻՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ

DON
À L'ÉGLISE



DONATION
FOR THE CHURCH

***Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal
Donations of July/August 2017
have been received with great appreciation***

GENERAL CHURCH:

Manoir Gouin Seniors \$181, Mr. Manvel Markosyan
\$40.

IN MEMORY OF
THE LATE IMASDUHI NIGOGOSIAN
TO LADIES AUXILIARY:
Mr. Vrej Nigogosian \$1000.



ELEVATOR FUND:

Mr. & Mrs. Raci Altan \$1000, Mr. & Mrs. Aret Tasciyan \$100.

"KOMITAS CHOIR:
Mi Vomen \$500.

GRAPE BLESSING:

Mr. & Mrs. Onnik & Marie Pilafian, Miss Hermine Mekhgeavakian, Mrs. Mayranus Ozoglu, Mr. & Mrs. Habib & Funda Malo \$100, Mr. & Mrs. Garbis & Aida Gayzak \$80, Mr. Hagop Tchouldjian, Mr. & Mrs. Hovsep & Mary Hovsepian, Mr. & Mrs. Varouj & Hasmig Margossian, Mr. & Mrs. Antranik & Armine Sirinyan, Mr. & Mrs. Arakel & Alice Arakelian, Mr. &

Mrs. Manouk & Siran Jamgotchian, Mr. & Mrs. Roupen & Meline Arsever, Mr. & Mrs. Norayr & Paylin Gurnagul, Mr. & Mrs. Antranik & Armine Dulbinci, Mr. & Mrs. Herman & Takuhi Odabsiyan, Mr. & Mrs. Arsag & Diana Torudag, Mr. & Mrs. Hirayr & Ceni Comlekcioglu, Mr. Toros Kilavuz, Mr. & Mrs. Sarkis & Anahid Gurnagul, Mr. & Mrs. Hagop & Mone Mercimek, Mr. & Mrs. Nazaret & Ani Sahakian, Mrs. Talaia Balabanian, Mr. & Mrs. Arsen & Seta Bosnakyan, Mrs. Nadya Fenerci, Mr. & Mrs. Diran & Vilma Attarmigiroglu \$50, Mr. & Mrs. Simon & Beti Sarayli, Mr. & Mrs. Hacik & Celin Adam \$40, Mr. Arto Demi, Mr. & Mrs. Kapriyel & Irma Ferah \$40, Mrs. Hilda Kepekci, Mrs. Asdghig Yazedjian \$30, Mrs. Silva Tursucu, Mrs. Hilda Tursucu, Mr. Levon Simonyan \$25, Mr. & Mrs. Panos & Kohar Topalian \$20.

MERELOTS ASDVATZATZIN HOKEHANKISD:

THE LATE MIHRAN DEMIR

Mrs. Nivart Demir \$100.

THE LATE MELINE SIRINYAN

Mr. & Mrs. Antranik & Armine Sirinyan \$50.

THE LATE BABOYAN FAMILY

Vartan & Vareteni Baboyan \$20.

THE LATE ARSALUYS & KEVORK CANKUL

THE LATE LUSAREV & ANNIK ATAMYAN

Mr. & Mrs. Nurhan Cankul \$50.

**IN LIEU OF FLOWERS, THE FOLLOWING
DONATIONS WERE RECEIVED FOR:**

THE LATE YEGHISAPET OZOGLU

Mrs. Irma Asiciyan \$50.

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



Հաճոյքով կը տեղեկացնենք ձեզի «Կոմիտաս» Դպրաց Դաս Երգչախումբի
նորընտիր վարչական կազմը, որ կը բաղկանայ հետեւեալ անձերէն.-

- Անահիտ Տոյար
- Մանիա Քէշիշեան
- Տօքթ. Վիլմա Տերպէքեան
- Արա Կերիքեան
- Գրիգոր Զանար
- Վահան Շաքարեան

Հետեւաբար կը շնորհաւորենք իրենց յանձ առած նոր պաշտօնը եւ կը մաղթենք
յաջողութիւն իրենց աշխատանքներուն ի փառս՝ Դպրաց Դասի վերելքին:

Հովիւ եւ Ծխական Խորհուրդ



ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ Հովիւն ու Ծխական
Խորհուրդը իրենց սրտագին շնորհակալութիւնը կը յայտնեն Պոլսահայ
Մշակութային Միութեան Եկեղեցասեր անդամներէն՝ Տ. եւ Տիկ. Օսքան եւ

Թանիա Հազարապետեանին, Տ. եւ Տիկ. Ռաֆֆի եւ Իլլիանա Ֆրէնկիլիին, Տ. եւ Տիկ.
Յակոբ եւ Անուշ Գազանին, Տ. եւ Տիկ. Շահան եւ Աշխէն Կազերեանին, Տ. եւ Տիկ.
Սոկրատ եւ Մարի Պիլէլիերին, Տ. եւ Տիկ. Մինաս եւ Վերժին Ասատուրեանին, Տ. եւ
Տիկ. Կարպիս եւ Դալար Թօքմանճեանին եւ Անթօ Աքչաքըրեանին, որոնք սիրայօժար
կերպով ստանձնեցին կազմակերպութիւնն ու պատրաստութիւնը Ս. Աստուածածնի
Վերափոխման Տօնին առիթով մատուցուող խորոված ճաշկերոյթին:

Մեր յատուկ գնահատանքը կ'ուղղենք վերոյիշեալ հաւատացեալ
անձնաւորութիւններուն, որոնք ընդմիջտ իրենց եկեղեցասեր եւ նուիրեալ
ծառայութեամբ՝ նիւթապէս եւ բարոյապէս քաջալեր կը հանդիսանան Հայց. Առաք.
Եկեղեցւոյ պայծառութեան եւ առաքելութեան:

Երախտագիտական ջերմ սիրով՝
Հովիւ եւ Ծխական Խորհուրդ



**Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐՄԱՆԻՍ
ԵԿԵՂԵՑԻ
ST-GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN
CATHEDRAL**

**ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ
ԴԷՊԻ ST- ANNE -DE -BEAUPRE
ՏԱՃԱՐ
PILGRIMAGE
TO ST-ANNE-DE-BEAUPRE
SHRINE**



Կազմակերպութեամբ՝ / Organized by:

ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՉՆԱՍՈՒՄԲԻՆ / LADIES AUXILIARY

**Չորեքշաբթի, 30 Օգոստոս 2017 / Wednesday,
August 30, 2017**



- *Մասնակցութեան Մակ - \$50*
- Participation Fee - \$50
- Ճամբորդական
Հանրակառք / Չովացուած
օդի դրութեամբ
 - Voyage Bus /Air -
Conditioned



**Յաւելեալ մանրամասնութիւններու համար հեռաձայնել
Եկեղեցի (514) 279-3066 / For more information call us at the
Church office at (514) 279-3066**



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի
Cathédrale Arménienne St-Grégoire l'Illuminateur
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

Կազմակերպություն՝

ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ



Տ Ա Ր Ե Կ Ա Ն

ՊԱՉԱՐ

Պատույ Հիւր՝

Ազնուափայլ Տիկին Սօնա Տէմիրճեան

Շաբաթ 28 եւ Կիրակի 29 Հոկտեմբեր 2017
ժամը 10:00-էն

Չեռային աշխատանքներ

Անուշեղէններու եւ խմորեղէններու վաճառք
Երկու օրերուն՝ ճաշի սպասարկութիւն

Յաեղեալ մանրամասնութեան համար հեռաձայնել
Եկեղեցոյ գրասենեակ՝ (514) 279-3066 թիւին



ԴՊՐԱՅ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

**Ս. Գրիգոր Լուսավորիչ
Առաջնորդանիստ Եկեղեցւոյ**

Հոգեւոր Հովիւն ու Դպրաց Դասի Վարչութիւնը

**Կը յայտնեն թէ պիտի սկսին դպրաց պատրաստութեան
Հանդիպումները**

**Այն պատանիներն ու երիտասարդները,
որոնք կը փափաքին ծառայել
Հայց. Առաք. Եկեղեցւոյ Սուրբ Խորանին եւ մաս կազմել
Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցւոյ Դպրաց Դասին կը
խնդրենք**

հեռաձայնել՝ Եկեղեցւոյ Հովիւին (514) 241 -9347

Կամ Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514)279-3066:

Հոգեւոր Հովիւ

Տէր Եղիա Ա Քինյ. Քերվանճեան

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

Rev, Arch. Fr. Yeghia Kervanjan: (514) 241-9347

E-Mail: secretary@saintgregory.ca, www.saintgregory.ca

Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի



ԽՈԿՈՒՄ ԵՒ ՍՈՒՐԲ ԳՐԶԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Սիրելի հաւատացեալներ, ԽՈԿՄԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ՍՈՒՐԲ ԳՐԶԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ արդէն իսկ տեղի
կ'ունենան ամէն Հինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին,
Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Եկեղեցւոյ մէջ:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալները մասնակցելու այս
հոգեպարար արարողութեան եւ սերտողութեան, որուն
ընթացքին միասնաբար պիտի փորձենք ճանչնալ Սուրբ
Գիրքը, Եկեղեցւոյ հաւատքն ու առաքելութիւնը, մեր դերն
ու մասնակցութիւնը եկեղեցւոյ կեանքին մէջ եւ
վերջապէս պատասխան գտնել մեզ յուզող
հարցումներուն ու մտահոգութիւններուն:

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:

Աղօթարար՝

Տ. Եղիա Ա Քինյ. Քերվանճեան


615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjyan: (514) 241-9347

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միբելի Հասարակական, Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզ, որ յետայսու, ամէն Կիրակի, Ձեր ինքնաշարժները կրնաք կանգնեցնել Bernard փողոցին վրայ գտնուող Ecole Outremont-ի parking-ին մէջ, սկսեալ առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. ժամը 3:00:

CAR'S PARKING

Dear Parishioners, We would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the Ecole Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm.



- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. Go all the way to the "centre d'éducation". The parking space is on your right.